ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ՊՏՂՈՒՆՔ
Հ/Հ 900322235038
ՀԿՀՀ –04701766
ԻՆԴԵՔՍ 1145

ՀԵՌԱԽՈՍ 02316-35-50

РА АРМАВИРСКАЯ
ГУБЕРНЯ СЕЛО ПТГУНК
ИНДЕКС 1145
ТЕЛ.0231 6-35-50
RA THE MARZ OF ARMAVIR
VILLAGE PTGHUNK
INDEX 1145

թիվ 01-83. 14.08 2012թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ եմ ներկայացնում 2012 թվականի հուլիս ամսվա ընթացքում Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարի ընդունած որոշումները և արձակած կարգադրությունը:

Առդիր 3 էջ:

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս.Զեյնալյան/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտքագրվել է 7224-12
«16» 08 2012.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

« 24» Հուլիս 2012 թվականի N 25

ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետությանընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով.

Որոշում եմ՝

1.2012 թվականի սեպտեմբերի 9-ին կայանալիք համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար կազմավորել մեկ ընտրական տեղամաս

2.Տեղամասի կենտրոնը կազմավորել Համայնքի Արարատյան փողոց թիվ 3 հասցեի « Տիգրան Մեծի անվան » միջնակարգ դպրոցի շենքում ՝ պատասխանատու նխանակաել դպրոցի տնօրեն՝ Սիլվա Մկրտումյանին

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՋԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«12» Հուլիս 2012 թվականի N 24

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրաետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 7-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 1 որոշումը.
Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի սեփականատեր՝ Արմինե Հարությունյանին պատկանող տնամերձ հողամասին (ծածկագիր 006-028) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի Ազգալդյան փողոց թիվ 16 տնամերձ հողամաս:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՉԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«18» հուլիս 2012թ թիվ 9

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՇԱՎԻՐԻ ԱՐԹԵՆՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԱՐՄԱՎԻՐ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով,«Համայնքային Ծառայության մասին » Հայաստանի Հանրապետության 20-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2012 թվականի հուլիսի 17-ի №02/07.1/2333-12 գրությունը:

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կարապետ Արշավիրի Արթենյանին 2012 թվականի հուլիսի 18-ից մինչև հուլիսի 27-ը գործուղել քաղաք Արմավիր, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան, համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նպատակով
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին (Հասմիկ Հարությունյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս.Զեյնալյան/